

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Մերիա	[3] Համար
6	Ապրիլ	2021 թ.		Բ	0095971924
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
6	Ապրիլ	2021 թ.		Մերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Գնքման ամսաթիվ	[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀՆՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	8	6	4	6	6	2	2	4
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	ՄԱՐԱԼ ԶԱԲԱՐՅԱԼ Անհատ ձեռնարկատեր (ԱԶ)							
[11] Բանկային տվյալները	Ինեկոբանկ ՓԲԸ		N 2052832253521001					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱՔԿԻՐ ԱՐԱՔԿԻՐ ԹԱՂԱՄԱՍԿՈՄԻՏԱՍԻ Պ. 1 249							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին և ախ աշխ. գործ. վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար	Ամսաթիվ					

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
NN ՕԿ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակություններ)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	Հայերեն-արաբերեն զրավոր թարգմանություն	էջ	1.5	2000		3000
2	Հայերեն-արաբերեն զրավոր թարգմանություն	էջ	2	2000		4000
3	Հայերեն-արաբերեն զրավոր թարգմանություն	էջ	2.5	2000		5000
4	Հայերեն-արաբերեն զրավոր թարգմանություն	էջ	12.5	2000		25000
Ընդամենը						37000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)
KOSTANDYAN MARINE 5305680287

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող
GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՈՐՈՇՈՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

04 փետրվարի 2021թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-հրավական համագործակցության վարչության ավագ դատախազ Ա. Հովհաննիսյանս, ուսումնասիրելով թիվ 58209820 քրեական գործով Լ.Իրանյանի Հանրապետության հրավասու մարմիններին հասցեագրված հրավական օգնություն ցույց տալու մասին հարցումը,

ՊԱՐԶԱՆՅՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունից թիվ 58209820 քրեական գործով Լ.Իրանյանի Հանրապետության հրավասու մարմիններին հասցեագրված հրավական օգնություն ցույց տալու մասին հարցման ուսումնասիրությամբ պարզվել է, որ այն կազմված է արարերեն լեզվով, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել դրա գրությունը թարգմանել արարերեն, իսկ ՄԱՐԱԼ ԶԱԲԱՐՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է հրականացնում և ուն ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են ՀՀ վճարելի դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած հրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑՑԻ

1. Թիվ 58209820 քրեական գործով Լ.Իրանյանի Հանրապետության հրավասու մարմիններին հասցեագրված հրավական օգնություն ցույց տալու մասին հարցման ուղևկից գրության արարերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՄԱՐԱԼ ԶԱԲԱՐՅԱՆԻՆ (ՀՀ քաղաքացու նոյնականացման քարտ 005724497, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ ԱՆ վկայական N 20՝ տրված 09.02.2015թ.) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ

կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրվեմանը՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

1. Թարգմանչին պարզարանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ թարգմանչիչը պարտավոր է առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ընկալման կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դժնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային հրավական
համագործակցության վարչության սվագ դատախազ

 Ա. Հովհաննիսյան

Արագա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ հրավորներն և պարզականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտականությունն մասին նախազգուշացված եմ:

Թարգմանչի՝


Մ. Զարգարյան

« 04 » 02 2021թ.

ՈՐՈՇՈՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«10» 02 2021թ.

ք.Երևան

«ՎՎ» գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Ա.Խաչատրյանս, ռաումնասիրելով 21/32-39-14 վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ, ԽՈՍՐՈՎ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ և ՍԵՄՅՈՆ ԵԴԻԳԱՐՅԱՆԻ վերաբերյալ «ՎՎ» միջոցով ԱՄԷ իրավասու մարմիններից ստացված միջնորդության հիման վրա 27.05.2014թ. «ՎՎ» իրավասու մարմնի կողմից հարուցվել է թիվ 69100414 քրեական գործը՝ ԱՄԷ Դուբայ քաղաքում տեղի ունեցած դեպքի առթիվ:

«ՎՎ» ԱԳՆ 18.12.2020թ. գրությամբ ստացվել է ԱՄԷ իրավասու մարմինների խնդրանքը՝ հիշյալ քրեական գործով վերջնական որոշման մասին տեղեկություն հայտնելու վերաբերյալ:

«ՎՎ» և ԱՄԷ միջև քրեական գործերով իրավական աջակցության ցուցաբերումն իրականացվում է «ՎՎ» և ԱՄԷ միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին» Պայմանագրի և «ՎՎ» և ԱՄԷ միջև հանձնման մասին» Պայմանագրի համաձայն: Համաձայն հիշյալ Պայմանագրերի՝ համապատասխանաբար՝ 13-րդ և 6-րդ հոդվածների դրույթների՝ Կողմերը հաղորդակցվում են հայցող Կողմի պաշտոնական կամ անգլերեն լեզուներով:

Նկատի ունենալով, որ ԱՄԷ իրավասու մարմինների կողմից հայցվող տեղեկությունն անհրաժեշտ է թարգմանել արաբերեն, իսկ ՄԱՐԱԼ ՉԱՔԱՐՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են «ՎՎ» վճարակ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով «ՎՎ» և ԱՄԷ միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին» Պայմանագրի 13-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ, ԽՈՍՐՈՎ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ և ՍԵՄՅՈՆ ԵԴԻԳԱՐՅԱՆԻ վերաբերյալ ԱՄԷ իրավասու մարմինների կողմից հայցվող տեղեկության (ՎՎ գլխավոր դատախազության մարդու սեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության 03.02.2020թ. գրության) արաբերեն գրավոր թարգմանությունն փափահովելու նպատակով որպես

Թարգմանիչ հրավիրել ՄԱՐԱԼ ՋԱԲԱՐՅԱՆԻՆ (ՀՀ քաղաքացու անձնագիր AP 0625401, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ ԱՆ վկայական N-20) և նրան պարգևատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ



Ա.Խաչատրյան

Արագա սույն որոշման օրինակը, իմ իրավունքներն ու պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պարասխանարկության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ՄԱՐԱԼ ՋԱԲԱՐՅԱՆ

«10» 02 2021թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍԱԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԱԹԻ ԱՎԱՆ ԵՎ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՋԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՍԱԶՈՒԹՅՈՒՆ

056, ք. Երևան, Բորյան փ. 1,
Հեռ. 63 14 22.

«15» 03 2021 թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգման հրավիրելու մասին

Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի տեղակալ Մ. Ա. Արամյանս.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2021 թվականի հունվարի 15-ին՝ ժամը 17:20-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում, ապա նաև բացատրություն է տվել Գուր Իքբալ Սինգն այն մասին, որ 15.01.2021թ.՝ ժամը 13:00-ի սահմաններում, Նոր Նորքի 2-րդ զանգվածի Մուղղական փողոցի 29/1 շենքի հատուկ կացարանում Սանի Ալին ձեռքով հարվածներ է հասցրել իր մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով իրեն ֆիզիկական ցավ և մարմնական վնասվածքներ:

2021 թվականի հունվարի 15-ին՝ ժամը 15:20-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում, ապա նաև բացատրություն է տվել Սանի Մուհամեդ Ալին այն մասին, որ նշված միջադեպի ժամանակ Գուր Իքբալ Սինգն ձեռքով բռնել և ոլորել է իր աջ ձեռքի ճկույթ մատը՝ պատճառելով իրեն ֆիզիկական ցավ:

Դեպքի առթիվ 25.01.2021թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 17158421 քրեական գործը:

2021 թվականի փետրվարի 26-ին վարչական շրջանների դատախազություն է ստացվել մեղադրյալ՝ Սանի Ալիի բացարկի միջնորդությունը, որով վերջինս խնդրել է թիվ 17158421 քրեական գործի վարույթից հեռացնել քննիչ Ն. Պավլովին:

Քրեական գործով անհրաժեշտ է մեղադրյալ Սանի Ալիի տրամադրել դատավարական համապատասխան փաստաթղթեր, սակայն նկատի ունենալով, որ վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, արաբերեն գրավոր և բանավոր

Որոշում
Թարգման հրավիրելու մասին

ք. Մասիս

<< 22 >> մարտի 2021թ.

Ես՝ Արարատի մարզի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա. Գասպարյանս, ուսումնասիրելով Ռ. Հարությունյանի հաղորդման հիման վրա << քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված թիվ 44177920 քրեական գործի նյութերը.

Պարզեցի

24.06.2020թ. -ին՝ ժ. 21:35-ին, Ռադա Հարությունյանն ահազանգել է << ոստիկանության Մասիսի բաժին և հայտնել, որ Արարատի մարզի Դարբիկ համայնքի հանրակացարանում վիճարանություն է, շտապ ոստիկան ուղարկեն:

Նույն օրը՝ ժամը 21:55-ին, << ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՕԿԿ-ից ոստիկանության Մասիսի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ իրենց է գանգահարել Դարբիկ համայնքի Անդրանիկի փողոցում գտնվող հանրակացարանի 33-րդ տան բնակչուհի Սյուզի Զանոն և հայտնել, որ հարևանները հարձակվել են իր տան վրա:

Նույն օրը՝ ժամը 22:55-ին, <<Մասիս ԲԿ>> ՓԲԸ-ից ահազանգ է ստացվել այն մասին, որ <<Ձախ բազկի գլխիկի հողախախտ>> ախտորոշմամբ բուժօգնության է ընդունվել Դարբիկ համայնքի Անդրանիկի փողոցի 4-րդ բլոք-հանրակացարանի 36-րդ բնակարանի բնակչուհի Ռադա Յակովլևի Հարությունյանը, ով հայտնել է, որ վիճարանության ընթացքում վնասել է ձեռքը:

24.06.2020թ. -ին՝ ժ 23:10-ին, Ռադա Հարությունյանը հաղորդում է տվել ոստիկանության Մասիսի բաժնում, որ նույն օրը՝ ժամը 21:00-ի սահմաններում, իրենց շենքի 1-ին հարկում վիճարանել է հարևան Պետիկ Ներսիսյանի հետ, որի ընթացքում վերջինս փայտով մեկ անգամ հարվածել է իր աջ ձեռքին, հրել, գցել է գետնին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության՝ թիվ 0236 եզրակացության՝ Ռ. Հարությունյանի ստացած մարմնական վնասվածքը, ըստ ներկայացված բժշկական տեղեկանքի, ձախ բազկի գլխիկի հողախախտի ձևով, հասցվել է բութ, կոշտ առարկայով, հնարավոր է նշված ժամկետում, չի բացառվում այդ վնասվածքի առաջանալու հնարավորությունը նաև գործի հանգամանքներում նշված պայմաններում, ինչի արդյունքում Ռ. Հարությունյանի առողջությանը պատճառվել է միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով:

Դեպքի << ոստիկանության Մասիսի բաժնում 2020 թվականի հուլիսի 6-ին << քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 44177920 քրեական գործը:

31.08.2020 թվականին Պետիկ Ներսեսեանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

04.09.2020թ. -ին Պետիկ Ներսեսեանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով:

16.02.2021 թվականին, համարելով հավաքված ապացույցները բավարար՝ գործով մեղադրական եզրակացություն կազմելու համար, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 265-րդ հոդվածի պահանջներով, տուժողին և մեղադրյալին հայտարարվել է նախաքննության ավարտի մասին, և նույն օրը նրանք ծանոթացել են քրեական գործի նյութերին:

23.02.2021թ. -ին Մասիս քաղաքում կազմվել է մեղադրական եզրակացությունը:

Քրեական գործով անհրաժեշտ է մեղադրյալ Պ. Ներսեսեանին տրամադրել մեղադրական եզրակացությունը և այն հատատելու մասին որոշումը, սակայն, նկատի ունենալով, որ վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին, փոխարենը տիրապետում է արաբերեն գրավոր և բանավոր խոսքին, ուստի հիշյալ դատավարական փաստաթղթերը թարգմանելու համար քրեական գործով անհրաժեշտ է հրավիրել թարգման, ով տիրապետում է հայերենին և արաբերենին և կարող է կատարել թարգմանություններ հայերենից արաբերեն և հակառակը:

Ոստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 53-րդ, 83-րդ և 101-րդ հոդվածների պահանջներով՝

Որոշեցի

1. Թիվ 44177920 քրեական գործով որպես թարգման հրավիրել Մարալ Չաքարյանին՝ ծնված 07.11.1982թ., անձնագիր՝ 00572449՝ տրված 15.11.2016թ., 004-ի կողմից, ով ունի բարձրագույն կրթություն, արաբերենից թարգմանություններ կատարելու փորձ և համապատասխան որակավորում, սահուն տիրապետում է հայերենին և արաբերենին, կարող է կատարել թարգմանություն, հանդիանում է քրեական գործով չջահագրգռված անձ:
2. Որոշման մասին հայտնել Մ. Չաքարյանին և վերջինիս պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախագոշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Դատախազի տեղակալ,

արդարադատության առաջին դասի խորհրդական  Ա. Գազարյան

Որոշման մասին ինձ հայտնել են, պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու

պարտականությունները, ինչպես նաև նախագրուցվել են ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանի  Վ. Զաքարյան

22. 03 2021թ.